«ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ»

Մե՛ր ալ թիւը հասաւ երեսուն և եօթի.
Աստուած իմ, սիրտս ի՛նչպէս դէպի Քեզ կը յորդի:
Բայց թիւն ի՞նչ կ'արժէ, Տէր, շնորհէ՛ որ որակին
Շողայ փայլը մեր մէջ, սրբրութեան ջինջ ոսկին:

Խընկաբոյր կարմիրով լեցուած այս բաժակն ա՛ռ:
Քամելէ վերջը մէջն ողկոյզներ բոցավառ,
Անդողդոջ յմտանեբով բայց ահով բըռնած վեր՝
Բերեր ենք զայն ընծայ սեղանիդ սըրբանուէր:

Ա՛ռ զայն, և տո՛ւր ուրիշ մը մեզի, փոխարէն.
Մեր ուխտն է որ երեսուն և եօթներ հո՛ս բերեն
Քեզ. իբրև ձօն յոյսի, հաւատքի և սիրոյ,
Անարատ կեանքերու զոհեր միշտ ի նորոյ,

Որ այս հողն օրհնուած, ոռոգուած քու աջով,
Ուռճացնէ միշտ ատոք հասկեր և որթեր ջով.
Որ նրազիդ սուրբ իւղին մընայ լոյսը անշէջ,
Ու «Անձինք նուիրեալք»ն հընչէ միշտ այս Տան մէջ:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@